Հայտարարություն ԶԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միեր Մեդրակյանի անպարկեշտ պահվածքի կապակցությամբ

Փետրվարի 22, 2016

Փետրվարի 19-ին՝ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստի օրը, ՀՀԿ խմբակցության պատգամավոր Միեր Մեդրակյանը լրագրողների հետ առնչվելիս ծայրահեղ լկտի պահվածք է դրսեւորել: Նախ՝ նա, նկատելով խորհրդարանի միջանցքում հավաքված թղթակիցներին, նրանց համար լսելի ձայնով ասել է. «էս ի՞նչ նախիր ա», այնուհետեւ, երբ ԶԼՄ-ների ներկայացուցիչները բացատրություն են պահանջել, պատգամավորը փորձել է անմեղ ձեւանալ, իսկ հետո սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել լրագրողներից մեկի հասցեին: Չբավարարվելով դրանով, Միեր Մեդրակյանը փորձել է տանել նրան «առանձնազրույցի»:

Հիշեցնենք, որ նույն պատգամավորն առաջին անգամ չէ, որ նման վարք է դրսեւորում խորհրդարանում հավատարմագրված լրագրողների նկատմամբ: Այսպես, 2012թ. դեկտեմբերի 19-ին նա «ծնոտ պոկելու» սպառնալիքով ու այլ անվայել արտահայտություններով էր արձագանքել «Ա1+»-ի լրագրող Միեր Արշակյանի՝ հարց տալու փորձին, իսկ 2014թ. մայիսի 22-ին փողոցային հայհոյանք էր հնչեցրել Tert.am կայքի թղթակցի հասցեին: Թեեւ Ազգային ժողովի Էթիկայի հանձնաժողովն անդրադարձել է Միեր Մեդրակյանի վարքին ու որոշել, որ նա, վիրավորելով «Ա1+»-ի լրագրողին, խախտել է պատգամավորական էթիկան, դա, ինչպես երեւում է, որեւէ ազդեցություն չի ունեցել ՀՀԿ-ականի վրա:

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպություններս, արտահայտելով մեր վրդովմունքը Միեր Մեդրակյանի նողկալի վարվելակերպի առնչությամբ, ինչպես նաեւ հաշվի առնելով, որ նման դեպքեր բազմիցս են տեղի ունեցել՝ նաեւ այլ պատգամավորների ու պաշտոնյաների մասնակցությամբ, պահանջում ենք.

– Հանրապետական կուսակցության ղեկավարությունից՝ քննարկել իրենց կուսակցի հարցն ու պատասխանատվության ենթարկել նրան՝ հորդորելով ինքնակամ վայր դնել պատգամավորական մանդատը,

– Ազգային ժողովի նախագահից եւ ՀՀԿ խմբակցությունից՝ հրապարակավ դատապարտել այս պատգամավորի վարքը, ներողություն խնդրել ԱԺ-ում հավատարմագրված բոլոր լրագրողներից, ում վիրավորանք է հասցվել, եւ երաշխիքներ տալ, որ նման դեպքեր այլեւս չեն կրկնվի,

Եթե մեր այս պահանջները չիրականացվեն, մենք հիմք ենք ունենալու արձանագրել, որ Հանրապետական կուսակցության եւ իշխանության տարբեր օղակների համար նորմ է Միեր Մեդրակյանի եւ նրա նմանների վարքագիծը: Եվ քանի որ Հայաստանի իշխանություններն ի զորու չեն կամ չեն ցանկանում պաշտպանել լրագրողներին տարաբնույթ սպառնալիքներից, ճնշումներից ու ոտնձգություններից, մենք ստիպված ենք լինելու ապավինել միջազգային

հանրությանը՝ կոչ անելով անհատական պատժամիջոցներ կիրառել, ինչպես դա արվում է այն անձանց նկատմամբ, ովքեր պարբերաբար ու ցուցադրաբար խախտում են օրենքները, դրա համար պատասխանատվության չենթարկվելով սեփական երկրում։

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ -ՀԱՅԱՍՏԱՆ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ